ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-17-37, aralezgg@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2014թվականի N 10-Ն

,,ԱՐԱԼԵԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ,, ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ,,ԱՐԱԼԵԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 63-րդ հոդվածի 1-ին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.<<Արալեզի բժշկական ամբուլատորիա >> փակ բաժնետիրական ընկերությունը / այսուհետ ՓԲԸ/ վերակազմավորման ձևով վերակազմակերպել <<Արալեզի բժշկական ամբուլատորիա >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության / այսուհետ՝ ՀՈԱԿ/:

2,Համայնքի ղեկավարին՝

ա/մեկամսյա ժամկետում կազմել և հաստատել ՓԲԸ վերակազմավորման կարգը և պայմանները տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգը.

բ/հաստատել ՓԲԸ գույքի և գույքային իրավունքների՝ ՀՈԱԿ -ին փոխանցման ակտը, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերվող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ.

գ/կայացնել ՀՈԱԿ-ի ստեղծման մասին որոշումը, կազմել կազմակերպության կանոնադրության նախագիծը և ներկայացնել ավագանու հաստատմանը.

դ/կազմել համայնքային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմը և ներկայացնել ավագանու հաստատմանը:

3,Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի ներկայացրած՝ <<Արալեզի բժշկական ամբուլատորիա >> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու համար Բելլա Ալբերտի Սողոյանի թեկնածությունը:

4,Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի, 2-րդ կետի <<Է>> ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Արալեզ համայնքի ղեկավարին:

5,ՓԲԸ տնօրենին, ընկերության բոլոր պարտատերերին օրենքով սահմանված կարգով ծանուցել ընկերության վերակազմավորման մասին:

6,Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 15,07,2014թ. թիվ 9-Ն որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ՀՈՓԱԼՅԱՆ ՀԱԿՈԲ
2. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
3. ՇԱՄԻՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
4. ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՀԱԳՆ

Համայնքի ղեկավար՝ ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ